

## ՆԿԱՐԱԳԻՐ

### առաջարկվող ապրանքի ամբողջական

Խաչպար ՍՊԸ-ն ԻԲԿ-ԷԱՃԱՊԶԲ-25/7 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում  
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	Ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
52	Փոքր մակերեսների ախտահանման և մաքրման միջոց, 750մլ կամ համարժեքը	Դիասեպտիկ 70, ցողացրիչ 750 մլ	Դիասեպտիկ 70, ցողացրիչ 750 մլ	Ինտերսեն պյուս	Միջոցը իրենից ներկայացնում է սպիրտ պարունակող բազմակոմպոնենտ հեղուկ՝ ցողացրիչի տեսքով, 750 մլ տարողությամբ: Որպես ազդող նյութեր պարունակում է սպիրտներ՝ 70 %-ից ոչ պակաս, ՉԱՄ-երի, գուանիդինի, և/կամ այլ խմբերին պատկանող ախտահանիչ նյութեր, ինչպես նաև ֆունկցիոնալ հավելումներ, այդ թվում՝ ջրի կոնդիցիոներ, Էմուլգատոր, փափկացնող հավելումներ, Ե վիտամին և դեիոնիզացված խմելու ջուր: Ախտահանիչ միջոցը օժտված

Է հակամանրէային ակտիվությամբ գրամբացասական և գրամդրական մանրէների նկատմամբ (այդ թվում՝ տուբերկուլոզի հարուցիչների, թեստավորված Mycobacterium Terrae շտամի նկատմամբ), ներհիվանդանոցային վարակների, ախտածին սնկերի՝ դերմատոֆիտների և կանդիդոզների հարուցիչների, վիրուսների (ներառյալ ադենովիրուսները, գրիպի, սուր շնչական վարակների այլ հարուցիչներ, Էնտերովիրուսներ, պոլիոմիելիտի վիրուս, ընդերային և արտաընդերային հեպատիտների, հերպեսի, մարդու իմունային անբավարության վարակի , ատիպիկ թոքաբորբի, թռչնի գրիպի վիրուսներ): մակերեսների արագ ախտահանման միջոցն օժտված է ախտահանիչ, ճարպագերծող և դեզոդորացնող հատկություններով, ազդեցությունը՝ սկսած 15 վայրկյանից մինչև 3 ժամ տևողությամբ: Միջոցը նախատեսված է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում, տարբեր

ուղղվածության հիմնարկներում և հաստատություններում, այդ թվում նաև կենցաղում, որպես միջոց տարբեր օբյեկտների և ոչ մեծ մակերեսներով մակերևույթների արագ ախտահանման համար, այդ թվում՝ կոշտ և փափուկ գուլջի, բժշկական, բարուրասեղանների, սեկցիոն սեղանների, կահավորանքի պարագաների, լուսավորող սարքավորումների և սարքերի, մանրէասպան լամպերի, բժշկական սարքերի և սարքավորումների մակերեսների (այդ թվում կուլվեզների, արհեստական շնչառության սարքերի, անեսթեզիոլոգիական սարքերի, օպտիկական սարքերի, մամոգրաֆների, ֆոնենդոսկոպների, ախտորոշիչ սարքավորումների, այդ թվում ուլտրաձայնային հետազոտության (ՈւՁՀ), տվիչների և գլխադիրների, կարդիոէլեկտրոդների), ֆիզիոթերապևտիկ սարքավորման, բարոխցերի, գինեկոլոգիական բազկաթոռների, բազկաթոռների գլխակալների և արմնկակալների, սայլակների, պատգարակների,

հենակների, դռների և պատուհանների բռնակների, բազրիքների, անջատիչների, շերտավարագույրների, դեկորատիվ պանելների (Էկրան), ջեռուցման համակարգի խողովակաշարերի արագ ախտահանման համար, բժշկական նշանակության արտադրատեսակների, այդ թվում ատամնաբուժական գլխադիրներ և ատամնաբուժական նյութեր (ատամնապրոթեզային կիսահումքեր, ալգինատային, սիլիկոնային, պոլիէթերային արտատպվածքներ), ախտահանման, մաքրման և դեզոդորացման համար: Տրանսպորտային միջոցների, այդ թվում շտապ և անետաձգելի բուժօգնության, սանիտարական տրանսպորտի, հանրային և բեռնատար տրանսպորտի արագ ախտահանման համար՝ սկսած 15 վայրկյանից: Պահպանման ժամկետը՝ 4- 5 տարի: Մատակարարման պահին ապրանքի պիտանիության ժամկետի առնվազն 2/3-ի առկայություն: Վտանգավորության

